# ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
# ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
# ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## 1. Նպատակ

Սույն ուղեցույցը սահմանում է մագիստրոսական թեզի հետազոտության պլանի կառուցվածքը, բովանդակային պահանջները և ձևաչափը: Հետազոտության պլանը հանդիսանում է պարտադիր գիտական փաստաթուղթ, որը հաստատվում է գիտական ղեկավարի կողմից մինչև տվյալների հավաքագրման մեկնարկը:

Հետազոտության պլանը նաև կազմում է ԵՊԲՀ էթիկայի հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի փաթեթի պարտադիր մասը և օգտագործվում է հետազոտության գիտական հիմնավորվածության, մեթոդաբանության և էթիկական համապատասխանության գնահատման համար: Առանց հաստատված հետազոտության պլանի և ԵՊԲՀ էթիկայի հանձնաժողովի դրական եզրակացության՝ տվյալների հավաքագրում չի թույլատրվում:

## 2. Հետազոտության պլանի կառուցվածք

### 2.1. Վերնագիր

- Հստակ, կոնկրետ, գիտական ձևակերպմամբ
- Արտացոլում է հետազոտության հիմնական թեման
- Անհրաժեշտության դեպքում ներառում է թիրախային խումբը և/կամ վայրը

### 2.2. Ներածություն և գրականության տեսություն (1.5-2 էջ)

Այս բաժինը պետք է ներառի.

- թեմայի արդիականությունը միջազգային և տեղական համատեքստում
- հիմնական գիտական աղբյուրների վերլուծություն
- առկա բացերի ներկայացում
- հետազոտության հիմնավորում

**Պահանջներ**

- առնվազն 10 գիտական աղբյուր
- վերջին 5–10 տարվա գրականություն
- միջազգային հոդվածներ առաջնահերթ

### 2.3. Հետազոտության նպատակ և խնդիրներ (0.5 էջ)

**Նպատակ**

Հետազոտության նպատակը պետք է լինի մեկ ընդհանուր, հստակ և չափելի ձևակերպում, որը արտացոլում է հետազոտության հիմնական ուղղությունը:

**Խնդիրներ՝** 3–5 կոնկրետ խնդիր
Խնդիրները պետք է լինեն կոնկրետ քայլեր, որոնց միջոցով իրականացվում է հետազոտության նպատակը:
**Խնդիրները պետք է՝**
✓ Բխեն անմիջապես նպատակից
✓ Լինեն տրամաբանական հաջորդականությամբ
✓ Լինեն չափելի և իրագործելի
✓ Հստակ ցույց տան՝ ինչ է ուսումնասիրվելու
✓ Համապատասխանեն տվյալների հավաքագրման և վերլուծության մեթոդներին

**2.4. Հետազոտության մեթոդաբանություն (2-3 էջ)**
**2.4.1. Հետազոտության դիզայն**
Նշել տեսակը՝
- քանակական
- որակական
- խառը մեթոդ

**2.4.2. Հետազոտության վայր և ժամանակահատված**
- իրականացվող հաստատություն
- ժամանակահատված

**2.4.3. Թիրախային խումբ**
- մասնակիցների բնութագիր
- ընդգրկման չափանիշներ
- բացառման չափանիշներ (եթե կան)

**2.4.4. Ընտրանքի չափ**
- մասնակիցների թիվ
- հիմնավորում

**2.4.5. Տվյալների հավաքագրման մեթոդներ**
- հարցաթերթիկ
- հարցազրույց
- ֆոկուս խմբեր
- երկրորդային տվյալների վերլուծություն
- այլ

**2.4.6. Տվյալների վերլուծություն**
Նշել ծրագրային ապահովումը և մեթոդները
(Excel, SPSS, թեմատիկ վերլուծություն և այլն)

**2.5. Հետազոտության սահմանափակումներ (0.5 էջ)**
Նշել հնարավոր սահմանափակումները՝

- ընտրանքի չափ
- մեկ հաստատություն
- ինքնագնահատում
- ժամանակային սահմանափակում

**2.6. Էթիկական հարցեր (0.5 էջ)**

- կամավոր մասնակցություն
- իրազեկված համաձայնություն
- անանունություն
- տվյալների գաղտնիություն

**2.7. Սպասվող արդյունքներ և գործնական նշանակություն (0.5 էջ)**

- ինչ արդյունքներ են սպասվում
- ինչպես կարող են կիրառվել առողջապահության համակարգում

**2.8. Ժամանակացույց**

| **Փուլ** | **Ժամկետ** |
|---|---|
| Գրականության ուսումնասիրություն | |
| Գործիքի մշակում | |
| Տվյալների հավաքում | |
| Վերլուծություն | |
| Թեզի հանձնում | |

**2.9. Գրականության ցանկ (1 էջ)**

- Vancouver կամ APA
- առնվազն 10 աղբյուր

**3. Ձևավորման պահանջներ**

- Տիտղոսաթերթ՝ ձևաչափը ներկայացված է Հավելված 1-ում (չի համարակալվում և չի ներառվում հետազոտության պլանի ընդհանուր էջաքանակում):

Տիտղոսաթերթը պետք է ներառի

  - Համալսարանի անվանումը
  - Ֆակուլտետի անվանումը
  - Կրթական ծրագրի անվանումը
  - «Հետազոտության պլան» նշումը
  - Մագիստրոսական թեզի վերնագիրը

    - Ուսանողի անուն, ազգանուն
    - Գիտական ղեկավարի անուն, ազգանուն, գիտական աստիճան
    - Քաղաք և տարի
- Հետազոտությա պլանի ծավալ՝ 7 էջ
- Տառատեսակև տառաչափ՝ GHEA Grapalat 11
- Տողային տարածություն՝ 1.5
- Հղումներ պարտադիր

**4. Հաստատման կարգ**

Հետազոտության պլանը հաստատվում է.

1. Գիտական ղեկավարի կողմից
2. Ներկայացվում է ԵՊԲՀ Էթիկայի հանձնաժողով

Առանց հաստատված պլանի՝ տվյալների հավաքագրում չի թույլատրվում:

**Հավելված 1**

**ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
**ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**
**«Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիր**

## ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

**Վերնագիր**
«_____»

**Մագիստրանտ**
Անուն, ազգանուն _____
**Գիտական ղեկավար**
Գիտ. աստիճան, կոչում, անուն, ազգանուն _____

**Հաստատում**
Գիտական ղեկավար _____ /ստորագրություն/
Ամսաթիվ _____

**Երևան – 2026**